

ԽԱՉԻԿ ՕՏՅԱՆ

(Օտյանների գերդաստանի պատմությունից)

ՌՈՒՐԵՆ ՕՏՅԱՆ

Օտյանների մեծ գերդաստանում իր ուրույն տեղն ունի հաշիկ Օտյանը՝ նշանավոր երգիծաբան Երվանդ Օտյանի հայրը:

Անցյալում Օտյանների մասին գրող բանասերները այս գործչի մասին տվել են կենսագրական կցկտուր տեղեկություններ ու անցել, առանց փորձելու որոշել նրա տեղը հայ հասարակական, մտավոր կյանքում: Եվ դրա կարիքն էլ գրեթե չի զգացվել, քանի որ Խ. Օտյանը երկար տարիներ եղել է պետական ծառայության մեջ և նրա անունը քիչ է երևացել հայ մամուլում, հրատարակություններում, բացահայտ հանդես չի եկել արևմտահայերի ազգային գործերում:

Մեր օրերում, սակայն, լայն հետաքրքրություն առաջացավ հաշիկ Օտյանի նկատմամբ: Առիթը Միքայել Նալբանդյանի «Կրիտիկա Սոս և Վարդիթեր»-ի նշանավոր աշխատության լրիվ տեքստի հայտնաբերումն էր և հրատարակումը Նալբանդյանի «Անտիպ երկեր» հատորում՝ ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի ջանքերով: Պարզվեց, որ հեղափոխական մեծ գործիչն իր այդ աշխատությունը նվիրել է հաշիկ Օտյանին, տիտղոսաթերթում գրելով «Միտական-եղբոր Խ. Պ. Օտ...ին նվիր»:

Այս հարցի կապակցությամբ առաջին միտքը, որ զբաղեցրել է մեր բանասերներին, այն է, թե ինչպես է պատահել, որ ժամանակի հայ առաջավոր բոլոր գործիչների հետ անձնական կամ նամակագրական կապ ունեցող Նալբանդյանը իր երկը նվիրել է, ասենք, ոչ թե Սոս. Նազարյանին, Հ. Սվաճյանին, Սոս. Ոսկանյանին կամ մի ուրիշ նշանավոր մտածողի, այլ մի անձնավորության, որը գրեթե անհայտ դեմք է մեր օրերում: Խաշիկ Օտյանի ո՞ր արժանիքները հաշիկ առնելով է, որ Նալբանդյանը նախապատվություն տվել է նրան: Դա արդյունք է եղել լուր անձնական մտերմության, թե՛ գաղափարական դրդապատճառներ ունի: Աշ. Հովհաննիսյանը Նալբանդյանի «Անտիպ երկերին» կցած ծանոթագրություններում գրում է. «Այն հանգամանքը՝ որ Նալբանդյանը «սիրական եղբայր» է կոչում նրան և նվիրում իր «Սոս և Վարդիթեր»-ի «Կրիտիկան», ենթադրել է տալիս, թե գաղափարական մտերմություն պիտի եղած լինի նրանց միջև: Անհավանական չէ, որ Օտյանը ևս եղած լինի Նալբանդյանի Պոլսի «բարեկամներից» միընթաց: Միանգամայն ճիշտ կռահում, որը, սակայն, անհրաժեշտ էր հիմնավորել հավաստի փաստերով:

Խաշիկ Օտյանի և Միքայել Նալբանդյանի գաղափարական կապերին անդրադարձել են նաև Ա. Մակարյանը¹, Ա. Ինճիկյանը², Ս. Դարոնյանը³ և ուրիշներ, առանց, սակայն, վերջնական արդյունքի հասնելու: Այս կնճոռոտ հարցի պարզաբանման ուղղությամբ հետաքրքիր որոշ փաստեր է նշում Գ. Ստեփանյանը: Նա իր մի հոդվածում օգտագործել է արխիվային շատ արժեքավոր երկու փաստաթուղթ, որոնք ոչ միայն լույս են սփռում Նալբանդյանի ու Խ. Օտյանի բարեկամության շարժառիթների վրա, այլև ակնբախ են դարձնում նը-

1 Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, Երևան—Մոսկվա, 1935, էջ 148:

2 Նույն տեղում, էջ 753:

3 Ա. Մակարյան, Երվանդ Օտյան, Երևան, 1965:

4 Ա. Մ. Ինճիկյան, Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954:

5 Ս. Դարոնյան, Մ. Նալբանդյան: Կյանքը և գործունեությունը, Երևան, 1979:

րանց գաղափարական մոտիկությունը⁶։ Դրանք *Խ. Օտյանի* գրած երկու նամակներն են՝ ուղղված Հովհաննես քահանա Մկրյանին (պահվում են Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում)։

Առաջին նամակից (1864 թ.) պարզվում է, որ Նալբանդյանի ձերբակալման լուրը աշխուժություն է առաջացրել նրա հակառակորդների շարքերում։ Հարմար առիթ էր ներկայացել նալբանդյանականների մեջ պառակտում առաջացնելու համար։ Հակառակ դրան, բանաստեղծի համախոհները պահպանում են իրենց նվիրվածությունը և, չընկճվելով, շարունակում են բարձր պահել պայքարի ազատագրական շունչը։ Այս պատճառով էլ *Խ. Օտյանը*, որ տեղյակ էր Նալբանդյանի ձերբակալմանը, գրել է, թե չարախոս ամբաստանություններն անհիմն են, սուտ ու զրպարտիչ, իսկ Նալբանդյանին «...պատվավոր կերպով տարեր են» Պետերբուրգ, և նա շուտով գալու է Կ. Պոլիս⁷։ Երկրորդ նամակում (1866 թ.) *Խ. Օտյանը* հայտնում է Նալբանդյանի՝ «Մեղվի» խրմբագրությունն ուղղած նամակի մասին, որով հեղափոխական-դեմոկրատիկ տեղեկացնում է, որ շուտով ինքը ազատ կարձակվի։ *Խ. Օտյանը*, նշելով, որ մոտ ժամանակներս Հ. Սվաճյանն ի վիճակի կլինի պաշտպանելու «սիրելի, քաղցրիկ» Նալբանդյանի ազատաշունչ գաղափարները, ոգեշնչված գրում է. «Կեցցե մեծն Նալբանդյան, կեցցե նա ի պատիվ ազատության և ի պարծանս հայ ազգին»⁸։ Այնուհետև անարգանքի սյունին է գամում Նալբանդյանի հակառակորդներին։

Մեծ խանդավառությամբ գրված այս նամակները, անձնական մտերմությունից զատ, ցույց են տալիս, որ *Խ. Օտյանն* ապրել է Նալբանդյանի կյանքով, գործունեությամբ և ըստ հնարավորին հանդես եկել որպես նրա պաշտպանն ու գաղափարակիցը։

Հրապարակելով արխիվային այս երկու նամակները, Գ. Ստեփանյանն իրավացիորեն գրում է. «Ուշագրավ է հատկապես բացառիկ այն խանդավառությունը, որով տոգորված են *Խ. Օտյանի* նամակները, հատկապես երկրորդը։ Այդ նամակից երևում է, թե ինչպիսի ցնծություն են ապրել Նալբանդյանի ազատության հետ հույսեր կապող մարդիկ»⁹։

Բայց դա քիչ էր «Կրիտիկան» բազմաթիվ գաղափարակիցներից հենց Օտյանին նվիրելու համար։ Դա, ինչպես նաև հայ հասարակական կյանքում *Խ. Օտյանի* գրաված տեղը պարզելու համար նախ բերենք *Խ. Օտյանի* կենսագրությունն որոշ փաստեր։ «Ռամկասեր» հաշիկին բնութագրելիս ասվել է՝ բարեհամբույր «մարդ մը, որ կենդանի առաքինություն մըն էր»¹⁰։ Նա, արևմտահայության համար ազգօգուտ բարեգործություններ անելով հանդերձ, աշխատել է չցուցադրել իր անձը (այդպես էր վարվում նաև նրա հայրը)։ Հավանաբար, նման գաղտնապահության համար էլ նրան անվանել են «թաքուն մարդը»¹¹։

Խ. Օտյանը ծնվել է Կ. Պոլսում, 1842 թ.։ Նախնական կրթությունը ստացել է ընտանիքում։ Հայրը՝ Պողոս Օտյանը, եղել է ժամանակի ամենազարգացած և բարեգործ անձնավորություններից։ Աշխատել է որպես ճարտարապետ։ Նա իր տանը ստեղծել է յուրահատուկ դպրոց, որտեղ բացի ընտանիքի անդամներից (Գրիգոր, Նշան, Խաչիկ, Հակոբ, Նվերիմե Օտյաններ) սովորել են նաև առաջադեմ մի քանի երիտասարդներ, ինչպես ականավոր դեմոկրատ-հրապարակախոս Հարություն Սվաճյանը¹²։ Պողոս Օտյանն իր ընտանեկան

6 Գ. Ստեփանյան, Նալբանդյանի արևմտահայ բարեկամների մասին (ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 8, էջ 91—96)։

7 Նույն տեղում, էջ 91։

8 Նույն տեղում, էջ 93։

9 Նույն տեղում, էջ 94։

10 «Արևիկ», 4. X. 1908։

11 Ա. Մակարյան, Երվանդ Օտյանի կյանքը, Երևան, 1977, էջ 27։

12 Հ. Սվաճյան, Կենսագրություն Պողոս աղայի. Օտյան («Մեղու», 2 տարի, 5. XI. 1862, Հավելված)։

դպրոցում հատուկ ուշադրություն է դարձրել լեզուներին, մասնավորապես՝ գրարարին, աշխարհարարին և ֆրանսերենին: Հայոց լեզվի ու հին մատենագրության ուսուցիչներն են եղել ժամանակի ականավոր հայկաբաններ Խաչատուր Պարտիզանյանն ու Խաչատուր Մխաբյանը, որոնք աշխարհաբարը գրական լեզու դարձնելու կողմնակիցներ էին և նկատելի դեր են կատարել աշխարհաբարի հղկման ուղղությամբ¹³: Թե Պողոս Օտյանը որքան մեծ ուշադրություն է դարձրել որդիների կրթության ու դաստիարակության գործին, երևում է նաև այն փաստից, որ նրա առաջարկով ընտանեկան դպրոցում կազմակերպվել են թատերական ներկայացումներ¹⁴: Այս մասին ուշագրավ վկայություն ունի հայ թատրոնի պատմաբան Շարասանը: Նա, խոսելով 1850-ական թվականների կեսերին Կ. Պոլսում կազմակերպված հայերեն ներկայացումների մասին, գրում է. «Նույն թվականներուն, Սկյուտար, Օտյան Պողոս աղա՝ ժամանակին էն հառաջադիմասեր անձերեն մին, իր բնակարանին ընդարձակ վերահարկը բեմ մը շինելով, իր սղայոց ու անոնց ընկերակիցներուն տրամադրության տակ դրավ զայն»¹⁵: Ապա ասում է, թե տնային այդ փոքր թատրոնում ներկայացվել են Ռասինի, Կոռնելի, Վոլտերի, Մոլիերի պիեսները:

Շարասանի հիշատակած փաստը զուգահեռում է այն տարիներին, երբ Խաչիկ Օտյանը 10—11 տարեկան էր, մասնակցում էր ընտանեկան դպրոցի պարապմունքներին: Նման մթնոլորտում ստանալով նախնական կրթությունը՝ նա ուսումը շարունակել է Փարիզի Հայկազյան վարժարանում: Փարիզում այդ տարիներին եղել է հայկական երկու դպրոց՝ մեկը հայ կաթոլիկների հսկողության տակ գտնվող Մուրադյան վարժարանը, որի տեսուչն էր Ղևոնդ Ալիշանը, մյուսը՝ վերոհիշյալ դպրոցը, որի տեսուչներն էին Ամբրոսիոս և Խորեն Գալֆայան վարդապետները: Նշենք, որ Նալբանդյանը մեծ հարգանքով է խոսել Մուրադյան վարժարանի տեսուչ Ղևոնդ Ալիշանի մասին, թեպետ մերժել է դպրոցի կրոնական մոլեռանդ դաստիարակությունը, իսկ Հայկազյանի մասին խոսելիս՝ քննադատել է Խորեն Գալֆայանի հակումը դեպի գրաբար լեզուն, նրա և Գ. Ավագովսկու պահպանողական հայացքները: Դրանով հանդերձ՝ Հայկազյան վարժարանը, անշուշտ, նպաստել է Խաչիկ Օտյանի մատենագրական հմտության զարգացմանը: Նույն տարիներին Փարիզում սովորում կամ աշխատում էին առաջավոր գաղափարների տեր մի շարք հայեր, ինչպես Հովհաննես Քյաթիպյանը, Ճանիկ Արամյանը, Ստ. Ոսկանյանը, Աբրահամ Մուրատյանը: Սրանցից Ոսկանյանը խմբագրում էր «Արևելք», հետագայում՝ «Արևմուտք» պարբերականները, Մուրատյանը՝ «Փարիզ» շաբաթաթերթը: Երկուսն էլ առաջադիմական դիրքերից պայքար էին մղում պահպանողական հոսանքների դեմ:

Խ. Օտյանը խանդավառ և ազգային-ազատագրական գաղափարներով լից-քավորված այս մթնոլորտում մի քանի տարի սովորելուց հետո վերադարձել է Կ. Պոլիս և 1850-ական թվականների վերջերից նետվել գրական-հասարակական ասպարեզ: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ Կ. Պոլիս վերադառնալուց հետո նա անմիջապես կապվում է «Մեղու» դեմոկրատական հանդեսի շուրջ համախմբված մարդկանց հետ, աշխատակցում նրան: «Հայրս՝ Խաչիկ Օտյան,— գրում է երգիծաբան Երվանդ Օտյանը,— և մեծ հորեղբայրս՝ Նշան Օտյան, նույնպես գրականություն ըրած էին իրենց երիտասարդությունը, Սըրվաճյանի «Մեղուներուն» մեջ երգիծական հոդվածներ գրելով՝ ծածկանունի տակ»¹⁶: Թե Խ. Օտյանը ինչ հոդվածներ է գրել, դժվար է որոշակի ասել, քանի որ դրանք, ինչպես վկայում է որդին, տպագրվել են ծածկանուններով, իսկ ծածկանուններով ուրիշներն էլ, այդ թվում նաև Գրիգոր Օտյանը, աշխատակցել են «Մեղվին»: Հայտնի է, որ «Մեղու» պարբերականում 1872-ին Խ. Օտյանը հրատարակել է Վիկտոր Հյուգոյի «Կլոտ Կեռ» վիպակի իր թարգմանու-

13 Ղրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 89:

14 Եր. Օտյան, Օտյանի ներքին կյանքը («Մասիս», 13. IV. 1893, էջ 196):

15 Շարասան, Թուրքահայ բեմը և իր գործիչները, Կ. Պոլիս, 1914, էջ 23:

16 «Ոստան», Գ. տարի, 1920, № 11—13, էջ 470:

թյունը, որը լույս է տեսել նաև առանձին գրքով, նույն տարում: Թարգմանական երկերով աշխատակցել է նաև «Մասյաց աղավնի» պարբերականին, որտեղ տպագրել է «Բանալի բնական գիտելյաց» աշխատությունը:

Ուրեմն, Փարիզում՝ Ստեփան Ոսկանյան, Ճանիկ Արամյան, Հովհաննես Քյաթիպյան, Պոլսում՝ Հարություն Սվաճյան, Սերովբե Թագվորյան, Մատթեոս Այվատյան, Արմենակ Հայկունի: Բայց սրանք բոլորն էլ Մ. Նալբանդյանի գաղափարներով տարված մարդիկ էին, առաջագիմ գործիչներ, որոնցից Նալբանդյանը ստեղծել էր գաղափարակիրների խմբակ, ինչպես այդ նշվում է Գ. Ստեփանյանի «Մ. Նալբանդյանի «Երկու տող»-ում հիշատակված մի ազգանվան աղավաղման շուրջ» ուղագրով հոդվածում¹⁷: իսալիկ Օտյանն էլ մասնակցել է հիշյալ խմբակի աշխատանքներին. անհավանական չէ: Ապրել մեղավականների շրջանում, իրենց տանը օրերով Նալբանդյանին հյուրընկալել, լսել նրա ազատաշունչ զրույցները և շտարվել նրա գաղափարներով՝ անհնար էր 19 տարեկան մի խանդավառ պատանու համար: Այդ ենթադրության համար ամուր կուլան է Մ. Զերազի այն վկայությունը, թե Օտյանների տանը հյուրընկալվելու օրերին այդ ընտանիքի անդամները երկյուղած հարգանքով ու հափշտակությամբ են լսել Նալբանդյանի զրույցներն ու հորդորները: «Կոմս էմմանուելի ազնիվ ոգին և բոցաշունչ ազատասիրությունը խոր տպավորություն գործեցին ունկնդիրներուն վրա, ինչպես լսած հմ բարեհիշատակ Դրիգոր Օտյանն», — դրել է Զերազը¹⁸:

Այս բոլորից հետո հասկանալի է դառնում Գ. Ստեփանյանի կարծիքը, թե՛ «Եթե Նալբանդյանը ի. Օտյանի մեջ շտեմներ գրական-հասարակական հարցերում իրեն գաղափարակից մի անձնավորություն, ապա «Կրիտիկան» չէր նվիրի նրան: Գուցե «Կրիտիկայում» բարձրացվող հարցերից մի քանիսի մասին Նալբանդյանը խորհրդածել է դեռևս Պոլսում, իր մտորումներին հաղորդակից դարձնելով ի. Օտյանին, և այժմ, երբ դրանք գրի էին առնվում, անհրաժեշտ էր համարում նվիրել այն մարդուն, որը դրանց մասին ամենից շատ գիտեր: Գուցե ի. Օտյանն է հուշել Նալբանդյանին՝ կարդալ «Ազապի հիքեյասի» գիրքը, որի մասին այնքան ջերմորեն խոսվում է «Կրիտիկայում»¹⁹:

Բայց, ի վերջո, ի՞նչ հիմնական զբաղմունք է ունեցել ի. Օտյանը: Ամենայն հավանականությամբ, Փարիզում հիմնավոր կրթություն ստանալուց և Կ. Պոլիս վերադառնալուց հետո նա արդեն պետական ծառայության մեջ դրտնեղվող Դրիգոր Օտյանի օժանդակությամբ մշտական պաշտոնի է անցնում՝ կառավարական գերատեսչություններից մեկում: ի. Օտյանը եղել է թուրքական կառավարության կողմից ստեղծված այն հանձնաժողովի կազմում, որը մասնակցել է 1878 թ. Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրի ստորագրմանը²⁰: Չանցած մեկ տարի նրան ուղարկում են Բեռլին: «Հայրիկս, — գրում է Եր. Օտյանը, — արդեն նույն միջոցին Բեռլին կըգտնվեիր պաշտոնով և մայրիկս պիտի երթար միանալու...» նրան²¹: Այնուհետև, 1880—1882 թթ. ծառայել է Ռումինիայում՝ որպես թուրքական հյուպատոս²²: Սակայն վկայություն կա այն մասին, որ ի. Օտյանի հիմնական աշխատանքը եղել է արտաքին գործերի նախարարության ծածկագիր հեռագրերի բաժնի տնօրինությունը: Այսպես, 1869 թ. Կ. Պոլսում, ութ եպիսկոպոսների էջմիածին ուղարկած գաղտնի հեռագիրը (որի նպատակն այն էր, որ պատրիարքը ընտրվի իրենցից) անհայտ ճանապարհով ընկնում է ի. Օտյանի ավագ եղբոր՝ Դրիգոր Օտյանի ձեռքը: «Օտյանի ձեռքը հասած է գաղտնիքին, որ կամաց մը ոտքի ելլելով՝ ծոցեն կը հանե ֆրանսերեն հեռագրին օրինակը և թարգմանելով կը

17 ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1952, № 6, էջ 105:

18 «Բաղմավեպ», 1917, № 10, էջ 392:

19 ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 8, էջ 93:

20 Ա. Մ ա կ ա ղ յ ա ն, Երվանդ Օտյանի կյանքը, էջ 28:

21 Եր. Օ տ յ ա ն, Երկերի ժողովածու, Երևան, հ. 4, 1962, էջ 8:

22 «Ոստան», 1920, № 11—13, էջ 331:

կարդա»²³։ «Ընդհանուր ժողովում» բացահայտելով դավադրությունը, Գ. Օտյանը առաջարկել է պատրիարք ընտրել Խրիմյանին։ «Բազմությունը մոլեգնարար կը ծափահարե «Կեցցե Խրիմյան, կեցցե Օտյան» ... Խրիմյանը այդ բոլորն ասդին պատրիարք է, աթոռ բերված 12 նոյեմբեր 1869-ին»²⁴։ Դավադիրներին Խորեն Եպիսկոպոսի փորձերը՝ հայտնաբերելու, «թե ինչպես ձեռք անցած էր գաղտնի հեռագիրը», մնում են ապարդյուն։ «Այս հեռագրի «լույս աշխարհ» բերելը անշուշտ «թաքուն մարդու»՝ Խաչիկ Օտյանի, գործն էր։

Նույնը հաստատվում է նաև Իզմիրլյանի պատրիարքության տարիներին վերաբերող Եր. Օտյանի հուշերով. Իզմիրլյանին «Կը հաղորդեի կարգ մը գաղտնի տեղեկություններ հայկական խնդրի մասին։ Հայրս, որ Բ դրան արտաքին գործերու նախարարության ծածկագիր հեռագիրներու տնօրենն էր, այդ տեղեկությունները կուտար ինձի»²⁵։

Եր. Օտյանի այս վկայությունը խիստ արժեքավոր է։ Պարզվում է, որ Խաչիկ Օտյանը համիդյան բռնապետության ամենադաժան օրերին էլ կապված է եղել հայկական շրջանների հետ, օժանդակել է ազատագրական պայքարին՝ նման գաղտնագրեր հաղորդելով նրանց։ Իզմիրլյանը պատրիարք է ընտրվել 1894-ին։ Ուրեմն Խ. Օտյանը արտաքին գործերի նախարարությունում աշխատել է երկար տասնամյակներ։ Մյուս կողմից հայտնի է, որ Մ. Նալբանդյանը նամակներով և գաղտնի ճանապարհներով տեղյակ է եղել Կ. Պոլսում և այլուր կատարվող անցուղարձեղներին։ Հայտնի է, նաև, որ հաղորդակապի համար Նալբանդյանն օգտվել է հատուկ ծածկագրից²⁶։ Բայց ո՞վ է կազմել այդ ծածկագիրը, և Նալբանդյանն ինչպե՞ս է օգտվել դրանից։

Ազատության վեհ գործով ապրող Նալբանդյանը 1860—1861 թթ., երկու ամսում, եռանդուն գործունեություն էր ծավալել պոսահայ հասարակության և շրջանում։ Այդ մթնոլորտում, բնական է, որ Խ. Օտյանի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ Նալբանդյանը նրան հանձնարարած լինի կազմել ծածկագրեր, իսկ վերջինս գաղտնագրերի հետ գործ ունեցողի իր հնարավորություններով ընդառաջեր «ամենասիրելի և քաղցրիկ» բարեկամին այդ և այլ հարցերում։

1862 թ. հոկտեմբերին Պետերբուրգի ընդհանուր հանձնաժողովի այսպես կոչված «սենատական ցուցմունքներ»-ից հայտնի է, որ Մ. Նալբանդյանը նամակագրական անուղղակի կապերի մեջ է եղել Լոնդոնի պրոպագանդիստներ Գերցենի, Օգարյովի, Բակունինի, Տխորժևսկու և ուրիշների հետ։ Այդ կապը Նալբանդյանի կողմից իրագործվել է գաղտնի՝ ծածկագրով և հատուկ բառաբանով։ Աշ. Հովհաննիսյանը գրում է. «...ծածկագրված բառերն ու նշանները կասկած չեն թողնում, որ բանալին կազմվել է ոչ թե Բակունինի և Նալբանդյանի, այլ Նալբանդյանի և արևմտահայերի միջև տեղի ունենալիք գաղտնի նամակագրությունը ծածկելու նպատակով։ Հավանական է, որ ծածկագիրը կազմողը եղած լինի հենց Նալբանդյանը...։ Սրան չի խանգարում այն հանգամանքը, որ ծածկագիրը կազմված է արևմտահայ լեզվով»²⁷։ Իհարկե, դա չի խանգարում և ավելի է ստիպում մտածելու, որ ծածկագիրը կազմվել է Մ. Նալբանդյանի և արևմտահայ լեզվով գրող Խ. Օտյանի համատեղ ջանքերով, Կ. Պոլսում, 1860—1861 թթ.։ Եթե Աշ. Հովհաննիսյանին հայտնի լիներ տարիներ հետո Գ. Ստեփանյանի հայտնաբերած՝ Խ. Օտյանի երիտասարդական հասակում գրած նամակների բովանդակությունը և Խաչիկի՝ ծածկագրական բաժնի տնօրեն լինելու հանգամանքը, հավանաբար առանց դժվարության լուծեր այս մեկ անհայտով խնդիրը։

Բակունինի՝ 1862 թ. Նալբանդյանին ուղարկած, շածկագրած և գրաքննության ձեռքն ընկած նամակներից պարզվում է, որ Նալբանդյանն իր կապն

²³ Գրիգոր Օտյան, Սահմանադրական խոսքեր ու ճառեր, Կ. Պոլիս, 1910, էջ ԻԲ։

²⁴ Նույն տեղում, էջ 1։

²⁵ Եր. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 28։

²⁶ Ս. Դարոնյան, նշվ. աշխ., էջ 406։

²⁷ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 475։

իրագործել է բոլորին անհայտ ճանապարհով՝ «Պետերբուրգի և Մոսկվայի վրայով, ինչպես նաև Օդեսայի և Քիֆլիսի վրայով, այսինքն՝ Կ. Պոլսի վրայով...»²⁸։ Այս կապի մասնակից անձի խիստ դադարների լինելն ապացուցվում է նրանով, որ անգամ Բակունինին հայտնի չէր դա՝ Այդ պատճառով նա Նալբանդյանին խնդրում է Ռուսաստան անցնող Վորոնովին սովորեցնել օգտվել այդ հաղորդակապից։ Բակունինի անզգուշության հետևանքով Մ. Նալբանդյանը ձերբակալվում է։ Քննչական հանձնաժողովը խաչածե հարցերով ցանկանում է պարզել նրա կապը արտասահմանի գործիչների հետ, Նալբանդյանը հիշատակում է իտալացի առևտրական Պոլ Կորիզենին։ «Նրա (Կորիզենի—Ռ. Օ) հետ ծանոթացա Կ. Պոլսում, բորսայում, ստեռլինգներով ռուսական ոսկի գնելու առիթով»։ Նալբանդյանը չէր մոռացել Պոլին, բայց «մոռացել» էր «սիրական եղբորը»՝ Խաչիկ Օտյանին, որի անունը վերհիշեց միայն Պետրոպոլովյան ամրոցի սարսուռ ազդող պատերի ներքո, իր հոյակապ «Կրիտիկա»-ի առաջին էջում հիշատակելով նրա անունը։ Նալբանդյանի ծոցատետրից պարզվել է, որ նամակագրական կապ է ունեցել Հ. Սվաճյանի, Ս. Թազվորյանի և շատերի հետ, սակայն Օտյանի մասին և ոչ մի բառ, ոչ մի նամակ. դա հույժ դադարի պիտի մնար պետական ծառայությունում գտնվող Խաչիկի, ոչ պակաս և Նալբանդյանի համար։ Նալբանդյանի «սենատական ցուցմունքներում» տված պատասխանները, անհայտ թողեցին բազմաթիվ հարցեր, այդ թվում և այն նպատակադրումը, որ «Նալբանդյանը Պոլսի բարեկամների միջոցով Սև ծովի կովկասյան ափերով պիտի փոխադրեր Լոնդոնի տպարանի հրատարակություններն ու «КОЛОКОЛ»-ը և հավանորեն Լոնդոնի պրոպագանդիստական կենտրոնի և «Земля и воля»-ի կովկասյան լիազորն էր»²⁹։ Բակունինի 1862 թ. մի նամակից հասկացվում էր, որ Նալբանդյանի ձերբակալումից հետո Պետերբուրգի հետ իրենց կապն ընդհատվել է։ «...Հիմա մեր բոլոր կապերը կտրվել են, և մենք ոչինչ չգիտենք... այնտեղից», — գրում է Բակունինը³⁰։ Իր հերթին Խ. Օտյանը նույնպես Նալբանդյանի բանտարկվելուց հետո ստույգ տեղեկություններ չունեիր նրանից, որը միանգամայն պարզ նկատվում է նաև Օտյանի վերոհիշյալ նամակներից։ Հասկանալի է, Նալբանդյանի ազատագրվումը խափանել էր նրա և «թաքուն մարդու» ծածկագրական կապը։

Այսպիսով, ակնբախ է Մ. Նալբանդյանի և Խաչիկ Օտյանի զաղափարական մտերմության փաստը, նաև այն, որ Նալբանդյանի արտասահմանյան կապերը իրագործվել են «Կ. Պոլսի վրայով», «մեղվականների», որոնց թվում և Նալբանդյանի զաղափարակից, ականավոր հասարակական գործիչ Խ. Օտյանի միջոցով։

Խաչիկ Օտյանը վախճանվել է 1908 թ.։

ХАЧИК ОТЬЯН

(из истории родословной Отыанов)

РУБЕН ОТЬЯН

Резюме

Отец юмориста Ерванда Отыана—Хачик Отыан был участником национально-освободительной борьбы, в группе М. Налбандяна. Х. Отыаном в соавторстве с М. Налбандяном был разработан шифр, впоследствии использованный М. Налбандяном для секретной переписки с заграницей.

В знак уважения к личности Х. Отыана М. Налбандян посвятил ему свою «Критику» к роману Перча Прошяна «Сос и Вардигер». Это свидетельствует не только об их духовной близости, но и об их идеологических связях.

²⁸ Մ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 124։

²⁹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, էջ 513։

³⁰ Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, էջ 443։